

**Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՒԲԱՐԱՇԵՆ, ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԱՎԱՆ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ <<ՀՈԳԵԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված տարբերակ)**



Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	8
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	9
4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	9
4.3 Կլիման և օդային ավազան.....	12
4.4 Հողային ռեսուրսներ.....	20
4.6 Ջրային ռեսուրսներ.....	22
4.7 Կենսաբազմազություն.....	26
Բուսական աշխարհ.....	26
Հիմնական ծառատեսակներ.....	26
Խոտաբույսեր և թփեր.....	26
Կենդանական աշխարհ.....	27
Կաթնասուններ.....	27
Թռչուններ.....	27
Սողուններ և երկկենցաղներ.....	27
Միջատներ.....	28
Բուսական աշխարհ.....	28
Կենդանական աշխարհ.....	28
4.8 Պատմության և մշակութային հուշարձաններ.....	29
4.9 Բնության հուշարձաններ.....	30
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....	30
5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ.....	30
6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՏՐԱԼՅՈՒՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	36
7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ.....	38
7.1 Հիմնական ցուցանիշների նկարագիր և հողային հանույթ.....	38
7.2 Շինարարության ժամանակացույցի հաշվարկ.....	40
7.3 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ.....	41
7.4 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն.....	43
7.5 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	45
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	46
8.1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր.....	47

8. 2 Արտանետումների աղբյուրները.....	47
8. 3 Մթնոլորտային օդ.....	48
8. 4 Զրային ռեսուրսներ.....	49
8. 5 Հողային ռեսուրսներ	50
8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	50
8. 7 Հակահրդեհային միջոցառումներ.....	51
8. 8 Աղմուկ և թրթռում	51
8. 9 Թափոնների կառավարում	54
9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	59
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	60
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	68
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ և ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՈՒԹՅՈՒՆ	73
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ	84
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	85
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԻՐԱԴՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	87
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ՀԱՏՎԱԾ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ	88
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	91

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնող	«Երևան նախագիծ» ՓԲ
Նախաձեռնողի հասցեն՝	ք. Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 2
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ք. Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցե
Հողամասի ընդհանուր մակերեսը	7.02808 հա

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27. 11. 2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և դեկլարելու գործընթացները:

«Քուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.): Սահմանում է ՀՀ

տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«**ՀՀ հողային օրենսգիրք**» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«**Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին**» **ՀՀ օրենք** (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

Ջրային օրենսգիրք (2002թ.): Ջրային օրենսգրքի խնդիրներն են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մեխանիզմների ստեղծումը, ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը, ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը՝ օգտագործելով արդի նորագույն տեխնոլոգիաներ, մասնավորապես տվյալների առցանց փոխանցմամբ հոսքաչափական սարքավորումներ, բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով

անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, հիդրոտեխնիկական կառույցների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը, ստորերկրյա ջրային մարմինների համար լավ կարգավիճակի, մակերևութային ջրային մարմինների համար առնվազն լավ կարգավիճակի, իսկ խիստ փոփոխված ջրային մարմինների համար՝ պոտենցիալ լավ կամ միջակ կարգավիճակի ապահովումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) **հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝** – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (**ՀՕ-121** (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի

պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)-կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 781-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը

ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

ՀՀ կառավարության փետրվարի 8-ի 2018 թվականի N108-Ն որոշում՝ Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին՝ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները

ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ սահմանվել են բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի առավելագույն թույլատրելի խտությունները (ՍԹԿ):

Այս որոշումը հիմք է հանդիսանում մթնոլորտային օդի որակի վերահսկման և էկոլոգիական մոնիթորինգի իրականացման համար հանրապետության բնակավայրերում:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշմամբ հաստատվել է մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության ազդեցության գնահատման կարգը՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Որոշումը նախատեսում է տնտեսական գործունեության արդյունքում մթնոլորտային օդի աղտոտման կանխարգելման, վերահսկման և գնահատման իրավական հիմքերը:

«Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքը (27.11.2006թ.) նպատակ ունի պահպանել երկրի և մոլորակի միջնորդային շերտը՝ վերահսկելով և կարգավորելով օզոնաբանական նյութերի արտադրությունը, ներմուծումը, արտահանումը և օգտագործումը: Օրենքը սահմանում է օզոնային շերտի պաշտպանության միջոցառումների իրավական հիմքերը և հետևանքների կանխարգելման պարտավորություններ պետական մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց համար:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Քաղաք Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության հատուկ հսկողության մասնաշենքի նախագծի համար հիմք են հանդիսացել «Երևան նախագիծ» ՓԲԸ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 12-12-2024թ. կնքված հ.ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2 պայմանագիրը և տեխնիկական առաջադրանքը: Նախագիծը կատարված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31012025-01-0148 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014

թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է քաղաք Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում: Նախատեսվող գործունեության բուն տարածքում և հարակից տարածքներում չկան բնապահպանական առումով զգայուն օբյեկտներ, չկա ձևավորված որևէ էկոհամակարգ, պատմության, մշակույթի կամ բնության հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ: Որպես քաղաքաշինական գործունեության մեջ արդեն իսկ ներգրավված տարածք, ունի բավարար չափով զարգացած ենթակառուցվածքների համակարգ:

4. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հարավարևելյան կողմում, Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում:

Աշխարհագրական տեսակետից տեղամասը տեղադրված է Նուբարաշենի բլրաշարի կենտրոնական մասում, սիմետրիկ ձգվածությամբ լեզվականման ջրբաժանի գագաթային մասում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Նուբարաշենի ալյուվիա-կուտակումային սարավանդի սահմաններում, Ողջաբերդ-Նուբարաշենի բլրաշարի հարավ-արևմտյան եզրամասում, ալյուվիա-պրոլյուվիալ լանջերի վրա:

Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք, այն ամբողջությամբ սահմանազատված է բետոնե և քարե պարիսպներով: Տեղամասը նոսր կառուցապատված է, մասամբ ասֆալտապատված: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1224.0-1227.0 մետրի սահմաններում:

Երևանի տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ: Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների եզրակացությունը

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, տարբեր գիտա-արտադրական և նախագծա հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հարավ-արևելյան եզրամասում, Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում, դրա հյուսիսային կողմում, Երևան քաղաքի Նուբարաշեն Վ/Շ «ՀՀ ԱՆ հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ տարածքում, հարավ-արևելյան կողմում:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Նուբարաշենի ալյուվիա-կուտակումային սարավանդի սահմաններում, Ողջաբերդ-Նուբարաշենի բլրաշարի հարավ-արևմտյան եզրամասում, ալյուվիա-պրոլյուվիալ լանջերի վրա: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք, այն ամբողջությամբ



սահմանազատված է բետոնե և քարե պարիսպներով: Տեղամասը նոսր կառուցապատված է, մասամբ ասֆալտապատված:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1224.0-1227.0 մետրի սահմաններում:

Համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմակտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Տեղամասում իրականացված աշխատանքների ընթացքում մինչև 8.0 մետր խորությունը գրունտային ջրեր չեն բացահայտվել: Համաձայն հրատարակված գրականության տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 15.0 մետրից խորը:

5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքների վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 8.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 3 շերտեր՝

-	լիցքային գրունտներ	-	շերտ թիվ 1
-	կավային գրունտներ	-	շերտ թիվ 2
-	խոշորա-բեկորային գրունտներ	-	շերտ թիվ 3

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները, փլուզում, սողանք, կարստ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կառույցի հիմքերի վրա ներկա պահին, բացակայում են:

Համաձայն դիտարկումների և հարցումների տվյալների տեղամասի հետազոտված սահմաններում առկա են մի շարք ստորգետնյա կոմունիկացիոն հաղորդակցողիներ, որոնց անցման սահմաններում լիցքային գրունտների հզորությունը կարող է հասնել մինչև 1.5 մետրի, կախված դրանց տեղադրման խորությունից


7. Համաձայն ՀՀՇՆ 20-04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

8. Հաշվի առնելով ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված տվյալները՝ հետազոտվող տեղամասն ունի բարենպաստ ինժեներա երկրաբանական և գեոտեխնիկական պայմաններ:

4.2 Սեյսմիկա և երկրաբանություն


Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների

և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (2-րդ գոտիականության):



Սեյսմա-տեկտոնական տեսակետից տարածքը տեղադրված է վաղ-ալպիական ծալքավորման Երևանի միջլեռնային վերադրված ճկվածքի սահմաններում, Հրազդան գետի կիրճի աջակողմյան հարթ տափարակի վրա: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ տարածքներից մեկը:

4. 3 Կլիմայի և օդային ավազան
Հետազոտվող տեղամասն ունի չոր, մայրցամաքային կլիմա: Կլիմայի առանձնահատկությունների ձևավորման հարցում մեծ դեր են խաղում աշխարհագրական դիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները, տարածքի պաշտպանվածությունը բարձր լեռնային զանգվածներով, ինչպես նաև Իրանական և Փոքրասիական մայրցամաքային լեռնային գոտիներին մոտ լինելը: Կլիման բնորոշվում է հիմնականում երկարատև տաք ամառով և կարճատև մեղմ ձմեռով: Ստորև տրվում են միջինացված կլիմայական հարաչափերը՝



Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

Գործունեության տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-01-2024 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը, որոնցով հաստատված Երևան «Արաբկիր»,

Երևան «Ագրո» և Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Ագրո»	-3.8	-0.8	5.6	12.2	17.2	21.9	25.8	25.6	20.9	13.6	5.9	-0.7	12.0	-30.1	41.6
Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Ագրո»	77	70	61	57	55	48	44	42	47	59	71	78	59	77	63	44	30

Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28
---------------------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
«Էրեբունի»	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		
Երևան «Ագրո»	23	25	31	44	49	27	17	8	12	28	26	23	313	128	185
	23	26	34	25	40	34	25	24	29	33	49	24	49		

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանում	Ամիսներ	Կրկնելիությունը, %												ըստ ուղղությունների	միջին արագությունը, մ/վ	առաջնորդող կրկնելիությունը	ամսական արագությամբ ուղղված ընդհանուր քանակը	ըստ ուղղության	ընդհանուր քանակը	առավելագույնը	ըստ ուղղության	ընդհանուր քանակը
		Միջին արագությունը, մ/վ																				
		սեպտեմբեր	օգոստոս	հուլիս	հունիս	մայիս	ապրիլ	մարտ	փետրվար	հունվար	դեկտեմբեր	նոյեմբեր	օկտոբեր									

Ը																
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		13	14	15	16
Երևան «Արաբկիր»	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45		0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9							
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15		2.1				
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5							
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13		3.4				
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6							
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19		1.8				
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0							
Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76		76	Հվ	2.4	Հվ	2.7
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45		45				
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36		36				
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63		63				
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5							

Աղյուսակ 5. Ձնածածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
1. Երևան «Ագրո»	46	41	113	-
2. Երևան «Էրեբունի»	58	47	-	60

Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի Հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Վերջինս մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում:

Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ



համեմատությամբ: Ստորև ներկայացված է մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի դիտացանցի քարտեզը.

Երևան քաղաքում կատարվում են փոշու , ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2023 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք


ամիսներին

չեն



գերազանցել

համապատասխան


ՍԹԿ-ները:



Գծապատկեր 13. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: Երևան քաղաքի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (հնգամյա միջին) ներկայացվում է ստորև՝

ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ³
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

4.4 Հողային ռեսուրսներ

Երևանի վարչական շրջանը գտնվում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասում, որտեղ տարածված են տարբեր հողային ռեսուրսներ: Հողերը օգտագործվում են ինչպես բնակելի, այնպես էլ գյուղատնտեսական ու արդյունաբերական նպատակներով: Երևան քաղաքի հողային ռեսուրսներն ընդգրկում են հետևյալ հիմնական տեսակները.

1. Բնակելի հողեր

Բնակելի տարածքների հիմնական մասը կազմում է Երևան համայնքի կենտրոնական մասում և նրա մերձակա տարածքներում: Այս հողերը վերաբերում են բնակելի շենքերի և ենթակառուցվածքների կառուցմանը: Գոյություն ունեն նաև առևտրային և վարչական

նշանակության հողեր, որոնք տեղակայված են քաղաքի կենտրոնում:

2. Գյուղատնտեսական հողեր

Երևանում առկա են որոշ գյուղատնտեսական հողեր, որոնք հիմնականում գտնվում են քաղաքի արտաքին սահմաններում, մասնավորապես՝ մերձավանների ու մոտակա շրջաններում: Այս տարածքներում աճում են տարբեր գյուղատնտեսական կուլտուրաներ՝ բանջարեղեն, մրգեր, ծմերուկներ, խաղող և այլ արդյունքներ: Սակայն քաղաքի ներսում գյուղատնտեսությունը զարգացած չէ, քանի որ հողերը հիմնականում օգտագործվում են շինարարության համար:

3. Արդյունաբերական հողեր

Երևանի արդյունաբերական հատվածներում օգտագործվում են արդյունաբերական հողեր՝ գործարաններ, պահեստներ, արտադրամասեր և այլ ենթակառուցվածքներ: Այս հողերը գտնվում են հիմնականում քաղաքի արևմտյան և հարավային մասերում: Երևան համայնքի արդյունաբերական հողերի օգտագործումը ունի մեծ նշանակություն տնտեսության զարգացման համար:



4.5 Կանաչ տարածքներ և այգիներ

Մշտապես կանաչ գոտիները՝ այգիները, այգեգործության տարածքները, խաղահրապարակները, ծառատունկերը, հանդիսանում են քաղաքի բնական ռեսուրսներ: Այս տարածքները մեծապես նպաստում են քաղաքային միջավայրի բարելավմանը և շրջակա միջավայրի պահպանությանը: Երևանի շուրջը կան բազմաթիվ այգիներ և մշակութային կանաչ գոտիներ, որոնք կարևոր են ոչ միայն բնակիչների համար, այլ նաև մեծացնում են քաղաքի համալիրվածությունը:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Տարածքի և հետազոտվող տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ,

անդեզիտաբազալտներ, հրաբխային խարամներ և ավազներ: Վերոհիշյալ առաջացումները ծածկված են Չորրորդականի հասակի բերվածքային առաջացումների շերտախմբով էյուվիալարոյովիալ և էյուվիալ ծագման առաջացումներով՝ կավավազներ, խոշորաբեկորային գրունտներ, տեխնածին գրունտներ և այլն:

Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 28.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ(ասֆալտ) չպառկապնդված, կավավազա-մանրախճային կազմի, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-1.5 մետր:

Շերտ թիվ-2 կավավազ բաց շագանակագույն, գորշավուն և դեղնավուն երանգների, կիսապինդ թանձրության, խճի և մանրախճի պարունակությամբ մինչև 10%, մասամբ կարբոնատացած, տեղ-տեղ ցեմենտացած, սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-1.0 մետր: Չորրորդականի հասակի այլուվիա-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-3 ճալքարա-կոպճային գրունտ, գլաքարերով, հրաբխային ապարներից, լավ հղկվածության, տարահատիկ ավազային լցանյութով 40%, առանձին դեպքերում կավային գրունտների և ավազների նրբաշերտերով, բներով, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 3.0 մետր Չորրորդականի հասակի այլուվիա-պրոյուվիալ առաջացումներ:

Տարածքում հողաբուսաշերտ առկա չէ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատման համար նախատեսված տարածքում իրականացնել բուսահողի լիցք ` 1 բաժին տորֆ, 1 բաժին հրաբխային խարամ, 0.5 բաժին փտած գոմաղբ հարաբերակցությամբ: 3228.5 քմ կանաչապատման տարածքի համար անհրաժեշտ է իրականացնել 60 սմ շերտով բուսահողի լիցք, որը կկազմի 1937.1 խմ:

4.6 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածության մոնիտորինգն իրականավում է «Հիդրոթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:



կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածին, որտեղ հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.56	3.33	77	2.10	3.44	61	2.08	3.10	67
Հրազդան	Արզնի	2.19	3.73	59	2.12	3.69	58	2.01	3.13	64
Հրազդան	Երևան	2.65	3.32	80	4.40	3.94	112	5.51	5.93	93
Մարմարիկ	Հանքավան	0.57	0.48	118	0.64	0.51	125	0.73	0.45	162
Մարմարիկ	Աղավնաձոր	1.65	1.48	111	1.28	1.50	85	1.28	1.33	96
Քասախ	Վարդենիս	0.30	0.53	57	0.34	0.55	63	0.34	0.50	69
Քասախ	Աշտարակ	3.72	2.75	135	2.93	2.93	100	2.86	2.66	107

Հրազդանի ԶԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Հրազդանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային և նստվածքային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին: Համաձայն առկա ֆոնդային նյութերի տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 23.0-25.0 մետր խորությունների վրա: Գրունտային ջրերը տեղամասում փորված հորատանցքերով չեն բացահայտվել:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր: Հրազդանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հրազդանի ԶԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում Դաշտավան, Հովտաշատ, Հովտաշեն, և Սիս համայնքների N1526, N1523 N2008, N1535, N1536 դիտակետերում ջրերի ծախսերը ավելացել են 0.01-0.48/վ սահմաններում: Մասիսի N1519 դիտակետում նույնպես ավելացում է նկատվել, դեկտեմբեր ամսին ծախսը կազմել է 5.14/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում ծախսը 0.7 /վ-ից ավելանալով հասել է 1.29/վ:

Սիս համայնքի N78, Զրաիովիտի N2004 և Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ 0.04-0.17մ սահմաններում:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Փարպի N2119 դիտակետերում դիտվել է ջրի մակարդակների նվազում 0.82-1.26մ, իսկ Լեռնամերձի N2088 և Դոդսի N2086 հորատանցքերում նկատվել է անշան բարձրացման միտում: Փարպիի N2119 հորատանցքում ջրի մակարդակը բարձրացել է 0.44մ-ով: Աղավնատան N2087 դիտակետում դիտվել է ջրի մակարդակի գրեթե կայուն վիճակ:

Հրազդանի ԶԿՏ-ի Կարբի N1636, Բջնի N246, Սուլակի N1297, N1832 բնաղբյուրներում դիտվել են ծախսի իջեցումներ, ք. Երևանի N970 դիտակետում նկատվել է 0.37լ/վ-ով ծախսի իջեցում, իսկ Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ:

Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ: Նիգավանի N2010, N2011 դիտակետերում մակարդակների իջեցումներ են դիտվել՝ համապատասխանաբար 0.88մ և 0.35մ: Բյուրականի N2108 դիտակետում դիտվել է ծախսի գրեթե կայուն վիճակ՝ իջեցման միտումով, իսկ Բուժականի N2105 դիտակետում ծախսը նվազել 0.16լ/վ-ով և կազմել է 0.8լ/վ:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում: Մասիսի N1519, Հովտաշենի N2053 դիտակետերում հանքայնացումը, իսկ Զրաիովիտի N2007 դիտակետում՝ հանքայնացումն ու սուլֆատ իոնների պարունակությունը գերազանցել են համապատասխան

**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը**



ՍԹԿ-ները:

Տեղամասում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը և նրա ձախակողմյան վտակ Գետառ գետը, որը բնական դրենացման մարզ է հանդիսանում գրունտային ջրերի համար: Գետառ գետի հունը գրեթե ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ ինժեներական կառույցներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի ալյուվիալ, պրոլյուվիալ առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին: Տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև 8.0 մետր խորությունը գրունտային ջրեր չեն բացահայտվել:

4.7 Կենսաբազմազություն

Երևանը, լինելով Հայաստանի մայրաքաղաքը և խիտ բնակեցված տարածք, ունի յուրահատուկ կենսաբազմազանություն, որը ձևավորվել է ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոնների ազդեցությամբ: Քաղաքի տարածքում կարելի է հանդիպել տարբեր բույսերի, կենդանիների, թռչունների և միջատների, որոնք հարմարվել են քաղաքային միջավայրին:

Բուսական աշխարհ

Երևանի բուսականությունը հիմնականում բաղկացած է քաղաքային կանաչ տարածքներից, այգիներից, փողոցների ծառերից և այգեգործական տարածքներից:

Հիմնական ծառատեսակներ

- **Կաղնի** (*Quercus iberica*, *Quercus macranthera*)
- **Հացենի** (*Carpinus orientalis*)
- **Թխկի** (*Acer platanoides*, *Acer campestre*)
- **Փշատ** (*Elaeagnus angustifolia*)
- **Սոսի** (*Populus alba*, *Populus nigra*)
- **Ուռենի** (*Salix alba*, *Salix babylonica*)
- **Կեչի** (*Betula pendula*)

Այս ծառատեսակները տարածված են Երևանի տարբեր այգիներում, բուլվարներում, ինչպես նաև Հրազդան գետի երկայնքով:

Խոտաբույսեր և թփեր

- **Մորի** (*Rubus caesius*)
- **Գիհի** (*Juniperus spp.*)

- **Մասուր** (*Rosa canina*)
- **Արմավիրի տանձենի** (*Pyrus armena*)
- **Անթառամ** (*Helichrysum arenarium*)
- **Ակացիա** (*Robinia pseudoacacia*)

Քաղաքի շրջակայքում, մասնավորապես **Զանգու գետի ափերին, Դավմայի այգիներում, Ծիծեռնակաբերդի և Նոր Նորքի անտառային տարածքներում**, հանդիպում են վայրի բուսատեսակներ, որոնք բնորոշ են Երևանի կլիմային:

Կենդանական աշխարհ

Չնայած Երևանի քաղաքային միջավայրին, այստեղ կարելի է հանդիպել մի շարք կենդանատեսակներ, որոնք հարմարվել են քաղաքային էկոհամակարգին:

Կաթնասուններ

- **Քաղաքային ողնի** (*Erinaceus concolor*) – տարածված է կանաչապատ հատվածներում:
- **Գորշուկ** (*Spermophilus musicus*) – հանդիպում է քաղաքի այգիներում և հարակից բլուրներում:
- **Աղվես** (*Vulpes vulpes*) – երբեմն հանդիպում է քաղաքամերձ տարածքներում, հատկապես Հրազդան գետի մոտ:
- **Գայլուկ** (*Canis aureus*) – կարող է հայտնվել Երևանի արվարձաններում:
- **Տափաստանային ճագար** (*Lepus europaeus*) – հանդիպում է Երևանի հարակից բլուրներում:

Թռչուններ

Երևանի քաղաքային պայմաններում ապրում են բազմաթիվ թռչուններ, որոնցից որոշները միգրացիոն են, իսկ մյուսները՝ մշտական բնակիչներ:

- **Արևելյան սարյակ** (*Sturnus vulgaris*)
- **Արծաթափայլ ճուռակ** (*Falco tinnunculus*)
- **Ագռավ** (*Corvus corax*)
- **Սպիտակ արագիլ** (*Ciconia ciconia*) – հանդիպում է քաղաքի ծայրամասերում:
- **Արագիլ** (*Ciconia nigra*) – հազվադեպ հանդիպող տեսակ է:
- **Սարյակ** (*Passer domesticus*)
- **Ձկնկուլ** (*Phalacrocorax carbo*) – հանդիպում է Հրազդան գետի երկայնքով:

Սողուններ և երկկենցաղներ

- **Տափաստանային կրիա** (*Testudo graeca*) – հանդիպում է քաղաքամերձ տարածքներում:

- **Արաքսյան գյուրզա** (*Vipera lebetina*) – հանդիպում է Երևանի հարակից անտառային գոտիներում:
- **Կանաչ գորտ** (*Pelophylax ridibundus*) – հանդիպում է լճակներում և արհեստական ջրամբարներում:

Միջատներ

Երևանի կանաչ գոտիներում հանդիպում են տարբեր միջատներ, որոնք ապահովում են քաղաքի էկոհամակարգի կայունությունը:

- **Մեղու** (*Apis mellifera*)
- **Տզրուկավոր** (*Lucanus cervus*)
- **Կանաչ մորեխ** (*Tettigonia viridissima*)
- **Թիթեռնիկներ** (*Papilio machaon*, *Vanessa atalanta*)

Հայաստանի Կարմիր գիրքը ներկայացնում է երկրի հազվագյուտ, անհետացող և վտանգված բուսական ու կենդանական տեսակները՝ ընդգծելով դրանց պահպանության անհրաժեշտությունը: Երևան քաղաքի տարածքում նույնպես հանդիպում են Կարմիր գրքում ընդգրկված որոշ տեսակներ: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

Բուսական աշխարհ

- **Երևանի կաղնի** (*Quercus araxina*): Հանդիպում է Երևանի հարակից անտառային գոտիներում:
- **Հայկական վարդ** (*Rosa armena*): Տարածված է Երևանի շրջակայքում՝ հատկապես բլրային հատվածներում:

Կենդանական աշխարհ

- **Հովազ** (*Panthera pardus tulliana*): Չնայած հազվադեպ է հանդիպում, սակայն Երևանի հարակից լեռնային տարածքներում հնարավոր է հանդիպել այս վտանգված գիշատչին:
- **Կովկասյան ջրասամույր** (*Lutra lutra meridionalis*): Հանդիպում է Հրազդան գետի որոշ հատվածներում:
- **Սև անգղ** (*Aegypius monachus*): Երևանի երկնքում երբեմն կարելի է տեսնել այս մեծ թռչունին:

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է քաղաք Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում: Տեղանքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, և բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել նշված տարածքում:

Նախագծման աշխատանքների շրջանակներում նախատեսվող գործունեության տարածքում իրականացված բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությամբ կարմիրգրքյան տեսակներ չեն արձանագրվել: Այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ

հաշվետվության վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացվել է առաջարկություն՝ սույն բաժնում ավելացնել բույսերի Կարմիր գրքում գրանցված Օշան թաղիքային - *Salsola tomentosa*, Վարդատերեփուկ մուշկային-*Amberboa moschata*, Շովիցիա գեղապտուղ- *Szovitsia callicarpa* Fisch տեսակները և կենդանիների Կարմիր գրքում գրանցված Ալեքսանդրի երկրաչափ թիթեռ- *Eupithecia alexandriana* Wardikian տեսակը և նախատեսել մոնիթորինգ: Այս առաջարկը վիճելի է առնվազն այն պատճառով, որ նախատեսվող տարածքը ներառված է ակտիվ քաղաքաշինական գոտում, հարևանությամբ գործում է արտադրություն և տարածքը չի կարող նշված բուսատեսակների աճելավայր և կենդանատեսակի ապրելավայր հանդիսանա, ինչը և փաստագրվել է նախագծման փուլում իրականացված հետազոտություններով: Բացի դա, նախարարության կողմից չի ներկայացվել հստակ հղում որևէ գիտական ուսումնասիրության կամ հեղինակի աշխատության, ուստի այս փուլում մենք հիմնվում ենք և առաջնորդվում մեր թիմի կողմից տարածքում իրականացված հետազոտությունների արդյունքներով, որոնց շրջանակներում տարածքում չեն արձանագրվել Կարմիր գրքում գրանցված բույսերի և/կամ կենդանիների պոպուլյացիաներ, աճելավայրեր ու ապրելավայրեր:

Նախարարության կողմից փաստագրված գիտական հղումներ ապահովելու դեպքում, նախաձեռնողի կողմից կնախատեսվի կենսաբազմազանության մոնիթորինգ: Մոնիթորինգը կներառի նշված տեսակների առկայության և տարածման պարբերական դիտարկումներ, թվաքանակի և բնակավայրերի վիճակի գնահատում, ինչպես նաև նախատեսվող գործունեության ընթացքում հնարավոր ազդեցությունների վերահսկում: Մոնիթորինգի արդյունքներով կարմիրգրքային տեսակների կայուն պոպուլյացիաների, դրանց աճելավայրերի և ապրելավայրերի առկայության դեպքում, կիրականացվեն ազդեցության նվազեցման և տեսակների պահպանության լրացուցիչ միջոցառումներ:

4.8 Պատմության և մշակութային հուշարձաններ

Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, հարուստ է պատմական և մշակութային հուշարձաններով, որոնք արտացոլում են քաղաքի բազմադարյա պատմությունն ու մշակութային ժառանգությունը:

Երևանի տարածքում հաշվառված է պատմության և մշակույթի 401 հուշարձան, որոնցից 155-ը առանձին կանգնած հուշարձաններ են, 33-ը՝ քարայր-կացարաններ, 20-ը՝ խաչքարեր, 20-ը՝ հուշաղբյուրներ, 19-ը՝ հուշակոթողներ, 11-ը՝ տուն-թանգարաններ, 6-ը՝ եկեղեցիներ:

Այս հուշարձանները վկայում են Երևանի հարուստ պատմության և մշակութային ժառանգության մասին՝ դարձնելով քաղաքը յուրահատուկ և գրավիչ ինչպես տեղացիների, այնպես էլ զբոսաշրջիկների համար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2004թ. դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 1616-Ն որոշմամբ հաստատված ցանկի, նախատեսվող գործունեության տարածքում և մոտակա տարածքներում պատմության և

մշակույթի անշարժ անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

4.9 Բնության հուշարձաններ

Երևան քաղաքում առկա են մի շարք բնության հուշարձաններ, որոնք կարևոր են ինչպես գիտական, այնպես էլ գեղագիտական առումներով: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

1. **Հրազդանի կիրճի սյունաձև բազալտներ:** Գտնվում են Հրազդան գետի կիրճում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու մոտ: Այս սյունաձև բազալտները ձևավորվել են հրաբխային գործունեության արդյունքում և ունեն յուրահատուկ երկրաբանական կառուցվածք:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի բնության հուշարձանների ցանկը, որտեղ ընդգրկված են նաև Երևանի տարածքում գտնվող հուշարձաններ:

Այս հուշարձանները կարևոր են Երևանի բնական ժառանգության պահպանման և ուսումնասիրության համար՝ նպաստելով քաղաքի կենսաբազմազանության պահպանմանը և էկոտուրիզմի զարգացմանը:

Որպես կենսաբազմազանության պահպանության ex-situ տարածքներ, կարևոր է հիշատակել.

Երևանի բուսաբանական այգի: Չնայած հիմնականում հանդիսանում է գիտահետազոտական և կրթական կենտրոն, այգին ներառում է նաև բնական հուշարձաններ՝ ներկայացնելով Հայաստանի և աշխարհի տարբեր տարածաշրջանների բուսականությունը:

Երևանի կենդանաբանական այգի: Բացի կենդանիների ցուցադրությունից, այգին ունի նաև բնական լանդշաֆտներ և բուսականություն, որոնք կարող են դիտվել որպես բնության հուշարձաններ:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները բացակայում են:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Քաղաք Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում (կադաստրային

ծածկագիր 01-010-0101-0002) նախատեսվող մասնաշենքը նախատեսվում է գործող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տարածքի ներսում գոյություն ունեցող հատուկ հսկողության մասնաշենքի տեղում:

Նախատեսվող մասնաշենքը նախատեսվում է գործող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տարածքի ներսում գոյություն ունեցող հատուկ հսկողության մասնաշենքի տեղում, որը ենթակա է քանդման՝ պարփակող պարսպի հետ միասին: Գոյություն ունեցող մասնաշենքը ուղղանկյուն կառույց է 99.6մx13.4մ արտաքին չափերով: Շինությունը կազմված է սեյսմիկ կարաններով առանձնացված երեք հատվածամասերից՝ երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերով: Կառույցի կենտրոնական հատվածամասը տանիքի տակ ունի նաև տեխնիկական հարկ:

Քանդման ենթակա շինություններ

- Հատուկ հսկողության մասնաշենք (99.6x13.4) -----14 000.0իւմ
- Պահեստային շինություն (5.0մx7.5մ մեկ հարկ)-----113.0իւմ
- Հավաքովի ե/բ պարսպի քանդում (H4.5մ) -----186.0զմ
- Քարե պարսպի քանդում (H3.0մ) -----130.0զմ
- Հավաքովի ե/բ արտաքին պարսպի քանդում (H2.5մ)--- 202.0զմ

Նոր նախատեսվող մասնաշենքի տարածքը նախատեսված է որպես փակ գոտի, պարփակված խուլ, քարե պարիսպով: Տարածքի մուտքը կազմակերպված է առանձին անցակետով հսկվող երեք ուղիներով՝ պացիենտների տեղափոխող մեքենաների առանձին մուտքից, սպասարկող անձնակազմի անհատական մեքենաների և հրշեջ մեքենաների մուտքից, անձնակազմի և այցելուների հետիոտն մուտքից: Տարածքը բարեկարգված է և կանաչապատված: Նախատեսված է ավտոկայանատեղի սպասարկող և բժշկական անձնակազմի անհատական մեքենաների համար:

Մասնաշենքն ունի 2 հատվածամաս, որոնք միմյանցից բաժանված են սեյսմիկ կարանով: Յուրաքանչյուր հատվածամաս ունի կանաչապատ և կահավորված ներքին բակ, նախատեսված հիվանդների զբոսանքի համար: Ներքին բակերը մթնոլորտային տեղումներից պաշտպանելու համար ծածկված են ապակեպատ գմբեթներով: Մասնաշենքն ունի երեք վերգետնյա և մեկ նկուղային հարկ: Նկուղային հարկում գտնվում է ապաստարան, պահեստային մաս, խմբակային և աշխատանքային թերապիաների համար նախատեսված տարածքներ: Նախագծով մասնաշենքի -3.60 նիշում նախատեսված է քաղաքացիական պաշտպանության ապաստարան՝ նախատեսված հիվանդների և անձնակազմի համար: Ապաստարանը տեղակայված է շենքի ստորգետնյա մակարդակում և նախագծված է գործող նորմատիվ պահանջներին համապատասխան՝ ապահովելով մարդկանց ժամանակավոր պաշտպանությունը հնարավոր արտակարգ իրավիճակների ժամանակ:

Առաջին հարկի մի հատվածամասում գտնվում է նախասրահը, վարչական մասը, հարազատների հետ հանդիպումների գոտին և հիվանդների ընդունման բաժանմունքը, իսկ մյուս հատվածամասում վերականգնողական բաժանմունքը: Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսված են հատուկ հսկողության չորս բաժանմունքներ: Մասնաշենքն օժտված է

չորս աստիճանավանդակներով և երկու զույգ վերելակներով, որոնք ապահովում են հենաշարժային խնդիրներով մարդկանց և բժշկական սայլակներով ու պադգարակներով պացիենտների ազատ տեղաշարժը: Ներքին բակերում նախատեսված են մեկական մետաղական աստիճաններ, որոնք հնարավորություն են ստեղծում բոլոր հինգ բաժանմունքների համար օգտվելու հանգստի գոտիներից: Մասնաշենքի տանիքը հարթ է և կազմակերպված ջրահեռացումով:

Բոլոր չորս աստիճանավանդակները ելք ունեն դեպի տանիք տեխնիկական սպասարկումներ իրականացնելու նպատակով և միևնույն ժամանակ հանդիսանում են տարհանման ուղիներ՝ ունենալով ելքեր ± 0.00 և -3.60 նիշերում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Նոր մասնաշենքում նախատեսված են ընդհանուր 120 մահճակալ հզորությամբ ներհիվանդանոցային ստացիոնար հոգեբուժական ծառայություններ տրամադրող հատուկ հսկողության թվով հինգ բաժանմունքներ՝

1. Հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունք տղամարդկանց և կանանց՝ դատարանների որոշմամբ որպես հարկադրանքի միջոց հարկադիր բուժման ծառայություններ մատուցելու համար----- 45 մահճակալ:
2. Խիստ հսկողության հոգեբուժական բաժանմունք՝ քրեակատարողական հիմնարկներից հոգեկան առողջության խնդիր ունեցող դատապարտյալների հոգեբուժական ծառայություններ մատուցելու համար-----20 մահճակալ:
3. Ստացիոնար դատա-հոգեբուժական փորձաքննությունների բաժանմունք՝ դատարանների և քննչական մարմինների կողմից նշանակված, կալանավորների և այլ անձանց ստացիոնար դատա-հոգեբանական և դատա-հոգեբուժական փորձաքննություն իրականացնելու համար -----5 մահճակալ:
4. Հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունք՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող զինծառայողներին հոգեբուժական ծառայություններ մատուցելու համար -----30 մահճակալ:
5. Վերականգնողական, վերասոցիալականացման և վերաինտեգրաման հոգեբուժական բաժանմունք -----20 մահճակալ:

Կառուցապատման մակերես ----- 3 221.5քմ (36.2%)

Ընդհանուր շինարարական մակերես ---- 10 995.0քմ

Կանաչապատ մակերես ----- 3 228.5քմ (36.3%)

Անջրանցիկ մակերեսներ ----- 2 445.0քմ (27.5%)

Մասնաշենքի շինարարական ընդհանուր մակերեսը ---- 10 677.5քմ

Որից՝

Վերգետնյա հարկեր ----- 7 520.5քմ

Ստորգետնյա հարկ ----- 2 902.0քմ

Տանիքի տեխնիկական մակերեսներ ----- 255.0քմ

Անցակետի շինարարական ընդհանուր մակերեսը -----171.5 քմ

Քարե պարիսպ (Հմիջ- 4.0մ) 0.4մx365.0գմ ----- 146.0քմ

5. 2 Կանաչապատում և ոռոգում

Կանաչապատման նախագիծն իրականացվել է Երևան քաղաքի, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության հատուկ հսկողության մասնաշենքի համար: Հիմք են հանդիսացել «Երևաննախագիծ» ՓԲԸ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 12-12-2024թ. կնքված Ի.ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2 պայմանագիրը:

Նախագիծը կատարված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31012025-01-0148 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

«ՀԱՊԱԿ» ՓԲ ընկերության հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 7.02808 հա, որից՝ Մասնաշենքի համար առանձնացված տարածքի ընդհանուր մակերեսը՝ 0.8895 հա Կառուցապատման մակերես՝ 3 221.5քմ

Ընդհանուր շինարարական մակերես՝ 10 995.0քմ

Կանաչապատ մակերես՝ 3 228.5քմ

Անջրանցիկ մակերեսներ՝ 2 445.0քմ

Ներքին բակի հողախառնուրդի լիցքից առաջ իրականացվելու է դրենաժային համակարգի և ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներ: Ջրահեռացման խողովակները միացվելու են կոյուղու ջրատարին: Ներքին հատվածի ոռոգման նախագիծը նախատեսվում է իրականացնել կաթիլային եղանակով՝ սնուցման աղբյուր ընդունելով սառը ջուրը, որը սպասարկում է մասնաշենքը: Վթարային ելքեր են նախատեսվել, որոնք միանում են կոյուղու խողովակաշարերին: Ներքին ոռոգմա համակարգի համար նախատեսվել են PE 25մմ գլխավոր, PE 20մմ ուղեկցող խողովակներ,կաթոցիկներ, որոնք ապահովում են մ շառավղով ջրելու հնարավորություն ինչպես նաև ոռոգման արդյունավետությունը ապահովելու նպատակով նախատեսվել են փականներ: Ներքին ոռոգման համակարգի խողովակները նախատեսված են 6bar ճնշման համար:

Արտաքին այգու հատվածի ոռոգման ցանցի սնուցումը իրականացվելու է նախկինում առկա ոռոգման ցանցի սնուցման աղբյուրից, որը առանձին հատակագծով ներկայացված է կանաչապատման նախագծում: Տվյալ տարածքի ոռոգման հատակագիծը արդիականացվել է ըստ ներկայիս գլխավոր հատակագծի: Արտաքին ոռոգման համակարգի համար նախատեսվել են սպրինկլերներ՝ 12A, 100, 84, 6A մոդելների որոնք համապատասխանաբար ունեն 3.7, 3, 2.4, 1.5 մետր շառավիղ: Արտաքին ոռոգման համակարգը նախատեսվում իրականացնել PE 050 (12Pa) գլխավոր և PE 50 (12Pa) ուղեկցող խողովակներով, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել 0100 մետաղական գիլզաների անցկացում: Նախատեսվում է նաև համապատասխանաբար թողնել վթարային ելքեր ինչպես նաև յուրաքանչյուր դուրս եկող

հիմնական խողովակի վրա առնձնացված փական: Խողովակների եզրերին ամրացվում են հատուկ խցաններ համապատասխան ճնշման համար: Ոռոգման համակարգի խողովակները նախատեսված 6-8 bar ճնշման համար:

Հիմնվելով տեղանքում իրականացված ուսումնասիրությունների և արդյունքների վրա, առաջարկվում է տարածքում մոլախոտերի հեռացման աշխատանքներ, հողի փխրեցում և բուսահողի լիցք: Յուրաքանչյուր ծառի բնաբաժակի մոտ ավելացվելու է բուսահող՝ տնկման աշխատանքների ժամանակ կիրառելու նպատակով: Նախատեսվում են կիրառել այնպիսի բուսատեսակներ, որոնք թույլ կտան մի կողմից նպաստել տարածքում մաքուր և առողջ միկրոֆլորայի ձևավորմանը, իսկ մյուս կողմից ստանալ գեղագիտական առումով ներդաշնակ միջավայր՝ հաղորդելով այգուն որոշակի գունային գամմա տարվա տարբեր եղանակներին: Հաշվի է առնվել ասեղնատերևավոր տեսակների տոկոսային հարաբերակցությունը լայնատերև տեսակների հետ՝ 70% լայնատերև 30% ասեղնատերևավոր տեսակներ: Առկա են կետային ծաղկային ձևավորումներ բազմամյա ծաղկատեսակով:

Ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար ընտրվել են հետևյալ բուսատեսակները՝ Մետաքսածառ լենքորանյան, Ծորենի թունբերգի պ.ծ. ատրոպուրպուրեա, Տոսախ մշտադալար, Կատալպա բիգնոնիանման, Մայրի ատլանտյան պ.ծ. լացող, Մայրի ատլանտյան, Հուդայածառ կանադական, Դրախտածառ պ.ծ. մանուշակագույն, Չմենի հորիզոնական, Իլենի ճապոնական, Ֆորգիցիա միջանկյալ, Հացենի սովորական, Հիբիսկուս սիրիական, Դրախտավարդ հուրանավոր, Գիհի հորիզոնական պ.ծ. ոսկեեզր, Գիհի կազակական, Գիհի ժայռային պ.ծ. սքայռոքեթ, Կելրեյթերիա հուրանավոր, Եդրևանի հնդկական, Վարդակակաչածառ, Մագնոլիա սուլանժի, Եդենի փշոտ պ.ծ. արծաթափայլ, Սոճի լեռնային պ.ծ. շտամբի վրա, Սոճի դրիմյան, Սակուրա ճապոնական պ.ծ. պիսսարդիի, Նշենի, Աղտոր դաբադային, Վարդ պ.ծ. շտամբի վրա, Սոֆորա ճապոնական, Բոնչի սովորական պ.ծ. բուլդենեժ, Վարդ գաճաճ, Թուլա բռաբանտ:

Տնկումների ավարտից հետո իրականացվելու է սիզամարգի հիմնման աշխատանքներ, որի համար անհրաժեշտ է՝ 161.4կգ խոտի սերմ: Այնուհետ բնանաբաժակների շուրջ ավելացվելու է մուք, կամ հրաբխային ապար (պեմզա), հողում խոնավությունը պահպանելու նպատակով:



ք.Երևան, Բաղրամյան 75/44

ՀՇՈՍՆՈՍ 26-00-88

09.01.2020թ.

г.Ереван, ул. Баграмяна 75/44

ТЕЛЕФОН 26-00-88

N08-01/0003

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի

Գլխավոր քարտուղար

պարոն Ա.Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան

Ի պատասխան Ձեր 27.12.2019թ. հ 02/27.1/8026-2019 գրության տեղեկացնում եմ, որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ տարածքների ոռոգման նպատակով որպես ջրաղբյուր կարող է ծառայել «Ջրառ» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող Ազատ III աստիճանի պոմպակայանի ճնշումային խողովակաշարը կամ Էրեբունի ա/ը տարածքները սպասարկող շաբաթօրյա ռեժիմով աշխատող ճնշումային խողովակաշարը:

Խնդրում եմ Ձեզ հանձնարարել նախագծող կազմակերպությանը մեր մասնագետների հետ համատեղ տեղազննում կատարել ջրառի կետի ընտրության համար:

Գործադիր տնօրենի ժ/պ  Ա.Բոչարյան

Կատ. գլխ.ճարտարագետ

Ա.Բաբայան

Հեռ. +37441111509

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- Էլեկտրատեխնիկական ցանցեր

ՀՀ ԱՆ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ հատուկ հսկողության մասնաշենքի էլեկտրատեխնիկական ցանցերի նախագիծը կատարվում է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, գլխավոր ճարտարապետի առաջադրանքի, հարակից բաժինների (օդափոխություն, ջրամատակարարում) ստացվող տվյալների:

Նախագծային լուծումները համապատասխանում են գործող նորմատիվային փասթաթղթերին:

Էլեկտրամաիակարարման սկզբունք: Կապված աշխատանքային նախագծով ստացված վերջնական հաշվարկային հզորության մեծությունից մասնաշենքի էլեկտրամատակարարումը կկատարվի մոտակա ենթակայանից 6 կամ 0. 4 կՎ զույգ մալուխագծերով: 6 կՎ տարբերակի դեպքում տեղում կնախատեսվի համապատասխան հզորության երկտրանսֆորմատորային ենթակայան: Մասնաշենքի նկուղային հարկում նախատեսվող գլխավոր բաշխիչ վահանից ռադիալ կամ մագիստրալ մալուխագծերով կատարվում է հարկերում նախատեսվող վահանների սնուցումը: Հիմնական սպառիչներն են՝

-հիվանդասենյակներ

-բժիշկների սենյակներ

-չիլերներ տանիքում

-ընդհանուր և վթարային օդափոխության սարքավորումներ

-խմելու ջրի և հրդեհային պոմպային կայանքներ

-խոհանոցներ ճաշասենյակներով

-վերելակներ

-ընդհանուր բեռեր (տարբեր նշանակության տարածքների լուսավորության և վարդակային ցանցեր)

-արտաքին լուսավորություն

-էլեկտրամեքենաների լիցքավորող կայաններ

Կրիտիկական բեռերի (վերելակներ, հրդեհային պոմպեր, վթարային օդափոխություն-խաղաղ պայմաններում- և ապաստարան) սնուցման համար նախատեսվում է համապատասխան հզորության դիզել-գեներատորային կայան: Ապաստարանի առկայությամբ պայմանավորված ցանցից դեպի գեներատոր սնող գծերի փոխանջատումը կատարվում է ձեռքի ռեժիմով: Սնող մալուխներն ընդհանուր մալուխատարով անցկացվում են մինչև աջ և ձախ թևերում նախատեսված ուղղաձիգ հորաններ, որոնցով բարձրանում են մինչև հարկերում տեղադրված տարբեր նշանակության վահաններ: Ուժային ցանցերի հորիզոնական հատվածների, ինչպես նաև խմբային գծերի անցկացման համար, բոլոր հարկերի միջանցքներում նույնպես նախատեսված են կախովի առաստաղների տակ թաքնված մալուխատարներ:

Լուսավորություն: Կիրարկված են տարբեր տեսակի և հզորության լուսադիոդային լուսատուներ: Հիվանդասենյակների և միջանցքների լուսավորության ղեկավարումը նախատեսված է

կենտրոնացված -քույրական պոստից: Բոլոր խոշոր տարածքներում լուսատուների ընդհանուր քանակի մեջ առկա են մինչև 20% համանման ներսարքված մարտկոցով լուսատուներ: Բացի այդ, մարդկանց էվակուացիայի ուղիներում (միջանցքներում, սանդուղքներում) տեղադրվում են լուսային "ԵԼՔ" և սլակային նշաններ

Հողանցման համակարգ: Որպես պաշտպանիչ միջոց կիրարկված է TN-S համակարգը- սկսած ենթակայանի 0.4 կՎ վահանից աշխատանքային և պաշտպանիչ զրոները մեկուսացված են մեկը մյուսից:

Ավտոմատացում և ցածր լարման համակարգեր: Նախագծվող համակարգներն են՝

-վթարային օդափոխության ավտոմատացում

-հրդեհաշիջման ավտոմատացում

-հրդեհային ազդանշանում

-ներքին հեռախոսային ցանց

-համակարգչային ցանց

Ցանցերի կենտրոնացման և փոխադարձ կապերի ապահովման համար, նկուխային հարկում նախատեսվում է ցածր լարման համակարգերի սենյակ, որից մալուխատարների միջոցով նշված համակարգերի գծերը անցկացվում են դեպի բաժանորդային կետեր:

- Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում

Քաղաք Երևան, Նուբարաշեն, Նուբարաշեն ավան 1/3 հասցեում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության հատուկ հսկողության մասնաշենքի էսքիզային նախագծի համար հիմք են հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ 12-12-2024թ. կնքված հ.ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2 պայմանագիրը և տեխնիկական առաջադրանքը, ճարտարապետական գծագրերը , շինարական նորմերը և կանոնները՝ ՀՀՇՆ22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀՇՆ IV-12.02.01-04 « Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում», СНиП II Л 9-70 Больницы и поликлиники

Ուսումնասիրություններից պարզվեց ,որ նախատեսվող շենքը մոտ 3 անգամ մեծ է նախկին մասնաշենքից, ունի կար ,այսինքն պետք է դիտվի 2 մասնաշենք և ամեն մեկը պետք է ունենա առանձին ջերմային ցանցի մուտք: Գտնում ենք նախատեսվող մասնաշենքը միացնել գոյություն ունեցող կաթսայատան, եթե պետք լինի կաթսայատան մեջ կատարել փոփոխություններ: Քանի որ պահանջվում է հովացում գոյություն ունեցող կաթսայատան տանիքում նախատեսվում է

ր:

Շահագործման փուլում չիլլերները լիցքավորված են **կարգավորվող նյութերով**, որոնց տեսակն ու քանակը ստանդարտացված է արտադրողի տեխնիկական փաստաթղթերում: Նյութերի կառավարումը իրականացվում է **օրենսդրությամբ սահմանված կարգով**, ապահովելով արտահոսքի կանխարգելում, մթնոլորտային օդի աղտոտման բացառություն և պահպանման առանձին գրանցում:

- Ջրամատակարարում և ջրահեռացում

ՀՀ ԱՆ հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ վերանորոգման համալիրի ջրամատակարարում և կոյուղի բաժնի աշխատանքային նախագիծը մշակվել է ճարտարապետական լուծումների հիման վրա: Շենքի հարկայնությունը 3 հարկ աշխատանքային: Շենքում նախագծվել է տաք, սառը ջրամատակարարման, կոյուղու և հակահրդեհային ցանցեր: Նախագիծը մշակված է գործող շինարարական նորմերին և կանոններին համապատասխան:

Հաշվարկային տվյալներ

Ցանցի անվանումը	Պահանջվող ճնշում	Հաշվարկային ելքեր		Օրել.Ճախսը Խ.Մ./օր	Հրդեհ Լ/ՎՐԿ
		Խ.Մ./ժամ	Լ/ՎՐԿ		
սառը ջուր	3.0 ՄԹՆ	5.396	2.337	41.200	2X2.5
տաք ջուր		3.503	1.522	18.540	
կոյուղի			3.937		
ընդամենը			7.769		

Սառը ջրի մուտքագիծը շենքի ներսում բաժանվում է երկու մասի խմելու կենցաղային ջրի, մյուսը հակահրդեհային: Հակահրդեհային ծորակները խմելու կենցաղային ջրի իրար միացվում են թուջե սողնակներով:

Տաք ջրամատակարարումը իրականացվում է տարածքում գործող կաթսայատանից: Տաք և սառը ջրագծերը հատակներում տեղադրված են հատակի հարթեցնող շերտի մեջ, իսկ պատերի վրա ակոսների մեջ, սվաղի տակ ջերմամեկուսացված: Սառը ջրամատակարարման խողովակները ընտրված են $\Phi=15-50$ մմ: Ներքին ցանցի միջոցով սան.սարքերից կենցաղային կեղտաջրերը ինքնահոս հավաքվում և հեռացվում են դեպի կոյուղու բակային ցանց: Շենքի կոյուղու ցանցերի համար ընտրված են $\Phi=100-150$ մմ պլաստմասե խողովակներ: Ցանցերի վրա նախատեսված են ստուգիչներ շահագործման ընթացքում ստուգումներ կատարելու համար:

7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

7.1 Հիմնական ցուցանիշների նկարագիր և հողային հանույթ

Նախագծային պարամետրերով տեղանքը դիտարկենք որպես հողային կառույց՝

հանույթի տեսքով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

- Հատուկ հսկողության մասնաշենք (99.6x13.4) -----14 000.0խմ
- Պահեստային շինություն (5.0մx7.5մ մեկ հարկ)-----113.0խմ
- Հավաքովի ե/բ պարսպի քանդում (H4.5մ) -----186.0զմ
- Քարե պարսպի քանդում (H3.0մ) -----130.0զմ
- Հավաքովի ե/բ արտաքին պարսպի քանդում (H2.5մ)--- 202.0զմ

«ՀԱՊԱԿ»ՓԲ ընկերության հողամասի ընդհանուր մակերեսը ---- 7.02808 հա
Մասնաշենքի համար առանձնացված տարածքի ընդհանուր մակերեսը ---- 0.8895 հա
Կառուցապատման մակերես ----- 3 221.5քմ (36.2%)
Ընդհանուր շինարարական մակերես ---- 10 995.0քմ
Կանաչապատ մակերես ----- 3 228.5քմ (36.3%)
Անջրանցիկ մակերեսներ ----- 2 445.0քմ (27.5%)
Մասնաշենքի շինարարական ընդհանուր մակերեսը ---- 10 677.5քմ
Որից՝
Վերգետնյա հարկեր ----- 7 520.5քմ
Ստորգետնյա հարկ ----- 2 902.0քմ
Տանիքի տեխնիկական մակերեսներ ----- 255.0քմ
Անցակետի շինարարական ընդհանուր մակերեսը -----171.5 քմ
Քարե պարիսպ (Հմիջ.- 4.0մ) 0.4մx365.0զմ ----- 146.0քմ

Տարածքի դիրքային բնութագրում և հեռավորություններ

Նախագծվող տարածքը տեղակայված է այնպես, որ պահպանվում են գործող քաղաքաշինական և սանիտարահիգիենիկ պահանջներով սահմանված հեռավորությունները: Մասնավորապես՝

- հարևան հողամասերից հեռավորությունները կազմում են 5 724 . 9 մ – 7 104 . 1 մ,
- ճանապարհային հատվածներից հեռավորությունները՝ 2 710 . 5 մ – 3 609 . 6 մ,
- հարակից շինություններից հեռավորությունները՝ 4 497 . 5 մ – 6 969 . 3 մ:

Նշված հեռավորությունները ապահովվում են տարածքի ֆունկցիոնալ ճիշտ կազմակերպումը և չեն առաջացնում լրացուցիչ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և հարակից տարածքների օգտագործման վրա: Հեռավորությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է նախագծային փաստաթղթի **էջ 11-ում**:

Մոտավոր ծավալով հողային հանույթի զանգվածը հաշվարկված է 25488 խմ, որից 3814 խմ-ը կպահեստավորվի և շինարարական աշխատանքների ավարտական փուլում կօգտագործվի ետլիցքի և տարածքի բարեկարգման նպատակով, իսկ 21674 խմ-ը

կտեղափոխվի համայնքապետարանի կողմից առաջարկվելիք վայր: Հողային աշխատանքների 99 %-ը կիրականացվի մեքենայական եղանակով, իսկ 1 %-ը՝ ձեռքով:

Քանդման աշխատանքները և առաջացող շինարարական աղբի հավաքումը, բեռնավորումը և հեռացումը իրականացվելու են համապատասխան մեքենամեխանիզմների կիրառմամբ՝ գործող շինարարական և բնապահպանական նորմերի պահպանմամբ: Շինարարական աղբի ժամանակավոր պահպանումը նախատեսվում է հատուկ առանձնացված տարածքում՝ նախագծային փաստաթղթով սահմանված կարգով (տես նախագծային փաստաթղթի թերթեր 30, 31): Աղբի ժամանակավոր պահման ընթացքում կկիրառվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառող միջոցառումներ, մասնավորապես՝ տարածքի սահմանափակում, աղբի տեսակավորում (հնարավորության դեպքում), փոշեգոյացման նվազեցում և տարածքի պարբերական մաքրում: Շինարարական աղբի վերջնական հեռացումը և տեղադրումը կիրականացվի միայն համապատասխան թույլտվություն ունեցող կազմակերպությունների կողմից՝ սահմանված աղբավայրեր տեղափոխելու միջոցով:

7.2 Շինարարության ժամանակացույցի հաշվարկ

Ըստ ՇՆԱԿ 1. 04. 03.– 85*-ի կետերում բացակայում է հասարակական նշանակության միաձույլ երկաթբետոնե կմախքով շինարարության տևողության հաշվարկը: Միաձույլ երկաթբետոնե կմախքի հաշվարկը կատարվել է ըստ 3-րդ ենթաբաժնի ոչ արտադրական նշանակության կառույցների շինարարություն, կետ 3-7-ի:

Ընդհանուր շինարարության ժամանակացույցը կլինի՝ 42 ամիս, որի փուլայնությունը և ժամկետները ներկայացված են ստորև սխեմայում.

ՄԱԽԴ 1.04 03-2008 էԶ, ԿԵՏ	ԿԱՌՈՒՅՑԻ ԱՆԱՆՈՒՄԸ	ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ՏԵԿՆՈՒԹՅՈՒՆ (42ԱՄԻՍ)			
			ՆՈՐԱՏԻՎ	ՈՐՂ ԳՈՐԾ	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	ԱՅՂ.ԹՎ ԱՄԽ.ՓՈՒԼ
էԶ 536 ԿԵՏ-10	«Հողմբան ամրությունն պահպանման աղբային կմախքով» ՓԸԸ հատուկ ուղղության մասնաճյուղ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐԱՎԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝ S=11000մ ²	31	1.15	36	2
		ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՈՐԵՆՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐԱՆ ԲՆԱՆՈՒՄ՝ S=2669մ ²	5	1.15	6	

N Ը/Կ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿՐԱՍԱՅԱԿՆԵՐ						
		1	2	3	4	5	6	7
1	ԼԱՌԱՊԱՏՐԱՍԱԿԱԼ ՓՈԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—						
2	ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԱՆՈՒՄ ՇԻՆ ԱՂԻԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ	—	—					
3	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		—	—				
4	ՍԻՉՈՒՅԼ ԵՐ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎՆԵՐ		—	—	—	—		
5	ՊԱՏԵՐ ԵՎ ՍԻՉԱՊԱՏԵՐ			—	—	—	—	
6	ՏԱՆԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	
7	ԲԱՅՎԱԾՔՆԵՐ ՊՈՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ					—	—	
8	ՍՎԱՂԵ ԵՎ ԵՐԵՍՊԱՏԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				—	—	—	—
9	ԼԵՐԵԻՆ ԿՈՍՏՐԱԿՏԻՈՆ ՑԱՆՔԵՐ					—	—	
10	ՀԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					—	—	—
11	ՀԱՏԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	—
12	ՏԱՐԱԾԵԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ							—

7.3 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ և մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները տվյալ շինարարությունում անհրաժեշտ է ավարտուն շինարարական արտադրանքի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական-որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Կառուցվող հասարակական նշանակության շենքի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով:

Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը:

Շինարարության մեջ զբաղված աշխատողների քանակը կազմված է՝

- հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R հ,
- ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R օ,
- ինժեներատեխնիկական անձնակազմից՝ Rիտա
- կրտսեր սպասարկող և պահակային անձնակազմից՝ Rկսպ:

Հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների քանակը ընդունվում է մեկ հերթափոխում բանվորների առավելագույն քանակի չափով

$$R_{բանվ.} = (1.2-1.3)R_{max} :$$

$$Ոչ հիմնական արտադրության վրա աշխատողների քանակը (0.2-0.5)R_{max}:$$

Ինժեներատեխնիկական անձնակազմը՝ հիմնական և ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների 11%, իսկ սպասարկող կրտսեր անձնակազմը՝ 3.2%, բացի այս արձակուրդում և հիվանդության պատճառով բացակայողների քանակը կազմում է ողջ աշխատողների գումարի 5-6 %-ը:

Շինարարական հրապարակում աշխատող բանվորների քանակի որոշման դեպքում պետք է հաշվի առնել նաև ոչ հիմնական արտադրությունում՝ տրանսպորտային, սպասարկման և այլ աշխատանքներում զբաղված բանվորների քանակը, որը վերցվում է 20-30% աշխատանքներում զբաղված բանվորների քանակից՝

$$R_{բանվ.} = (1.2-1.3)R_{max} :$$

$$R_{max.} = 21 \text{ մարդ:}$$

$$R_{բանվ.} = (1.2-1.3)R_{max} = 1.3 \times 21 = 28 \text{ մարդ:}$$

$$R_{իտա} = (11 \times 28) : 84.5 = 3 \text{ մարդ:}$$

$$R_{\delta} = (3.2 \times 28) : 84.5 = 1 \text{ մարդ:}$$

$$R_{կսպ} = (1.3 \times 28) : 84.5 = 1 \text{ մարդ:}$$

$$\text{Ընդհանուր աշխատողների թիվը՝ } R = R_{բ.} + R_{իտա} + R_{\delta} + R_{կսպ}$$

$$R_{ընդ} = 28 + 3 + 1 + 1 = 33 \text{ մարդ:}$$

Համաձայն նորմատիվ փաստաթղթերի աշխատողների թիվը ըստ կատեգորիաների ներկայացված է աղյուսակում

Անվանում	Աշխատողների թիվը, մարդ
Ընդհանուր, ներառյալ՝	33
- բանվորներ (84,5%)	28
- ԻՏԱ (11%)	3
- ծառայողներ (3,2%)	1
- ԿՍՊ և անվտանգություն (1,3%)	1

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք

շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքներ և տարածքի ջրցանի ջրամատակարարումը կիրականացվի «ՀԱՊԱԿ» ՓԲ ընկերությանը պատկանող ներտարածքային ջրագծից և գոյություն ունեցող երկու ջրամբարներից /տես գլխ. հատակագիծ՝ թերթ 10, հ14 /: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

7.4 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը և գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս հաշվի են առնվելու քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգները:

Շինարարության ընթացքում ձեռնարկվելու են բնապահպանական կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Հետևողական մշտադիտարկումներ են իրականացվելու շինարարական գործունեության բոլոր փուլերում՝ արձանագրելու շինհրապարակի որակի, բանվորական

հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամապատասխանությունները շինարարության ոլորտի համար սահմանված պահանջներին, նորմերին և չափորոշիչներին: Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողը կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Փոշենստեցման նպատակով տարածքում իրականացվելու է պարբերական ջրցան:

Թույլ չտալու համար նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան սարքին և մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը խոնավացվելու է և ծածկվելու պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալու փոշու առաջացում և տարածում: Ընդհանուր ջրապահանջը, ներառյալ նաև ջրցանի համար պահանջվող ջրի ծախսի հաշվարկը ներկայացված է ստորև աղյուսակում.

Ջրի սպառողները	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը օրում	Ջրի տեսակ արար ծախսը (L)	Պահանջվող որակ	Ջրի ծախսը մ ³ /օր Խմելու	Ջրի ծախսը մ ³ /օր Տնտեսական
Շինարարական հրապարակի ջրցան	Ջրում մ ²	3338	0.004	տնտեսական		13.4
Անիվների լվացում	Մեքենա/հատ	10	0.14	տնտեսական		1.4
Հակահրդեհային հիդրանտ	հատ	2	5.0	տնտեսական		10
Բետոնի ջրում Շին.մեքենաների ջրալցում	Ջրում մ ³ Մեքենա/հատ	20x210	0.03140.17	խմելու խմելու	1.251.7	
Խմելու ջուր Ցնցուղային սարքավորումներ R _{max} =33մարդ	մարդ մարդ	3333	0.0250.016	խմելու խմելու	0.80.5	
Շաղախների պատրաստում	մ ³	2x2	0.64	խմելու	2.56	
Ընդամենը					6.81	14.8

Երեկոյան ժամերին դադարեցվելու է աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

7.5 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և տեխնիկական բնութագրերը բերված են ստորև.

Բուլդոզեր ДТ-75 ДРС2՝ կամ համարժեք -1 հատ

Բարձր անցանելիություն՝ 390-470 մմ

-վառելանյութի min ծախս՝ 15լ- շահագործումը 1 ժամում

-օպտիմալ գաբարիտային չափեր՝ երկ.4,0մ, տեղաշարժման լայ. 1,8-2.24մ, բարձր.2.71մ

-առավելագույն հարմար տնտեսական և բնապահպանական առումով

Օդադողային էքսկավատոր Caterpillar 226 B-3 ՝ կամ համարժեք -1 հատ

-աշխատանքային բեռնամբարձություն՝ 680 կգ

- հզորությունը 45.5 Կվտ

Օդադողային էքսկավատոր Caterpillar 432 F՝ կամ համարժեք -1 հատ

-քանդման խորությունը՝ 5.7 մ

-բարձման բարձրությունը՝ 3.46 մ

-շերտի տարողությունը՝ 1.0 մ³

Ավտոկռունկ CKD AD-28 /TATPA՝ կամ համարժեք -1 հատ

Սլաքի թռիչքը՝ max-31.2 մ

-բեռնամբարձությունը՝ 29 տ

-չափսերը- 10.7 x 2.5 x 3.6 մ

Ավտոկռունկ KC-55744՝ կամ համարժեք -1 հատ

Սլաքի թռիչքը՝

-max-21.0 մ

-min-8.0 մ

-բեռնաբարձությունը՝ 25 տ

-չափերը- 6.76 x 2.5 x 3.6

Բեռնատար ինքնաթափ KAMA3 -2 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Օգտագործվող հիմնական շինարարական նյութերն են.

-սորուն՝ ավազ, խիճ,կոպիճ, բնահող

-փոշենման՝ ցեմենտ, գիպս,կիր

-խմորանման՝ բետոնախառնուրդ, շաղախ

-հեղուկ՝ բենզին, կերոսին, քսուկային նյութեր

-մանրհատավոր՝ շենքի արտաքին պարփակող պատեր՝ ալյուկաբոնդ, միջնապատեր՝շար/ թեթև բետոնե բլոկներ /

-հատավոր՝ մետաղապլաստե դռներ և պատուհաններ, լամինատե հատակներ, հատակի և պատերի սալիկներ, շենքի արտաքին պարփակող պատեր՝ ալյուկաբոնդ տեսակի կաղապարներ /մետաղ, փայտ, նրբատախտակ/

-փաթեղային՝ տանիքի փաթեղային նյութեր , ծալքաթիթեղ

-խոշորածավալ՝ վերելակի հորանների բլոկներ, խոշորածավալ բեռնարկղեր

Սանիտարատեխնիկական, էլեկտրատեխնիկական,օդափոխության համակարգերի նյութեր:

Շինարարության ընթացքում վտանգավոր նյութերի կիրառություն չի նախատեսվում: Շինարարական նյութերի պահեստավորումը կիրականացվի ըստ ՇՆՆ-ի:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս նախաձռնողը ղեկավարվելու է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան

փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցվելու են աղմկոտ աշխատանքների կատարումը:

8. 1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

8. 2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Արտանետումների, թափոնների և ռիսկերի գնահատում (քանդման ենթակա շենք-շինությունների առկայության դեպքում): Քանդման ենթակա շենք-շինությունների առկայությունը նախատեսում է արտանետումների, շինարարական և ոչ վտանգավոր/վտանգավոր թափոնների առաջացում, որոնք կարող են ազդել շրջակա միջավայրի վրա՝ օդային ավազանի, հողի և ջրային համակարգերի մակարդակով:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է՝

1. Արտանետումների գնահատում

- a) Վնասակար նյութերի հնարավոր արտանետումները օդային ավազան, մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը:
- b) Եռակցման, փորման, շինարարական տրանսպորտի և այլ գործընթացներից առաջացող փոշու և գազերի գնահատում:

2. Թափոնների գնահատում

- a) Շինարարական աղբի, փորման աշխատանքների ընթացքում առաջացած հողի, եռակցման խարամի, յուղոտված լաթերի, սպասարկման փուլում հնարավոր տրանսֆորմատորային յուղերի քանակ և վտանգավորության գնահատում:
- b) Թափոնների տեսակավորման և առանձին հավաքման անհրաժեշտություն՝ պահպանման և վերամշակման համար:

3. Ռիսկերի գնահատում

- a) Շինարարության և քանդման գործողությունների հնարավոր ազդեցությունը մարդկանց առողջության, շրջակա միջավայրի և կենդանական/բուսական տեսակների վրա:
- b) Պահպանողական և մեղմացնող միջոցառումների անհրաժեշտության գնահատում՝ ռիսկերի նվազեցման համար:

Այս գնահատումները հիմք կծառայեն մեղմացնող միջոցառումների և մշտադիտարկման պլանի մշակմանը, ինչպես նաև կպաշտպանեն շրջակա միջավայրի և մարդկանց առողջությունը:

8. 3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողների լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Ուսումնասիրվող գործունեության ընթացքում նախատեսվում են բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ **օդային ավազանի աղտոտվածության նվազեցման և կանխարգելման համար**: Այս միջոցառումների շրջանակում կիրականացվեն՝

- **Վնասակար նյութերի արտադրության, ներմուծման, արտահանման, պահման և օգտագործման վերահսկում**՝ բացառելով հավելյալ աղտոտվածության առաջացումը,

- **Արտանետումների նվազեցման միջոցառումներ**, ներառյալ ֆիլտրացիոն, կլանման և այլ տեխնոլոգիական համակարգերի օգտագործում,
- **Մշտադիտարկում և հաշվառում**՝ ապահովելով մթնոլորտային օդի աղտոտման պարբերական ստուգումներ և արդյունքների արձանագրում,
- **Արտահոսքի կանխարգելում**՝ բոլոր թափոնների և վտանգավոր նյութերի պահպանման, տեղափոխման և վերամշակման կանոնների կատարմամբ,
- **Մթնոլորտային օդի առավելագույն թույլատրելի խտությունների (ՍԹԿ) պահպանություն**, սահմանված ՀՀ կառավարության և այլ հրավական ակտերով,
- **Պետական և տեղական վերահսկողության ենթարկվել**՝ բոլոր գործընթացները համապատասխանեցնել օրենսդրությանը և նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Բոլոր վերոհիշյալ միջոցառումները իրականացվում են՝ ապահովելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների լիարժեք կատարման հիմքեր, ինչը երաշխավորում է մթնոլորտային օդի որակի պահպանություն և շրջակա միջավայրի պաշտպանություն:

Շինարարության փուլում կիրականցվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ անընդհատ ռեժիմով: Չափագրման գործիքը միացված կլինի քաղաքապետարանի օդի աղտոտվածության մակարդակի վերահսկման օնլայն կենտրոնին, որը հասանելի կլինի 24 ժամյա ռեժիմով՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2012թ. մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N405-Ն որոշման:

Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված են փոշու և շարժական աղբյուրներից առաջացող արտանետումներով: Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 5.2 ենթակետի պահանջներին համապատասխան՝ նախատեսվում են փոշու առաջացման նվազեցման միջոցառումներ, այդ թվում՝ շինարարական աղբի ժամանակավոր պահպանումը հատուկ տարողություններում և դրանց պարբերական ջրցումը, շինհրապարակի և հարակից տարածքների (մայթերի, ճանապարհների) մաքրության ապահովումը, ինչպես նաև շինարարական տրանսպորտային միջոցների պարապորդի արգելումը շինհրապարակում: Նշված միջոցառումները նպատակ ունեն նվազեցնել օդային ավազանի աղտոտման ռիսկերը և ապահովել մթնոլորտային օդի որակի պահպանումը:

8. 4 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

8. 5 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական ադրից:

8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8. 7 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

8. 8 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ և ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված

լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլխին: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ LA_{eq} , կազմում է 85 դԲ: Գլխինը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LA_{eq} , կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/մ²: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 \lg m - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$L_{աղ} = 13 \lg m - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ² $K=1,3$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ատր}$ ըստ աղույսակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլխինի համար՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլխինի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
<p>Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:</p> <p>Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p>				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ավիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. 9 Թափոնների կառավարում

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:

- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությամբ սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն: Թափոնների ծավալային հաշվարկված ցուցանիշները ներկայացված են ստորև.

Շինարարական թափոնների տարեկան ծավալը՝ $12 \times 24 \times 1.5 = 432$ խմ

Կենցաղային աղբի տարեկան ծավալը՝ $12 \times 24 \times 0.5 = 144$ խմ

Շին.թափոնները կհավաքվեն համաձայն ՇԳՀ-ի, համաձայն որի, թափոնների համար նախատեսված 2 աղբաման, չափերը $1.5 \times 2.5 \times 2.5$: Դրանք կհեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Երևանի համայնքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	91200601 01 00 4	432 մ ³
3.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի	IV	91200400 01 00 4	144 մ ³

Շենքերի քանդումից առաջացած շինարարական թափոններ
Քանդման աշխատանքների արդյունքում առաջացող շինարարական թափոնները հիմնականում դասվում են ոչ վտանգավոր թափոնների շարքին: Դրանց կազմը ներառում է բետոն, աղյուս, քար, մետաղ, փայտ, ապակի և հողային խառնուրդներ:

Վտանգավոր բաղադրիչների առկայության դեպքում դրանք առանձնացվում և կառավարվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված թափոններ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)
Կենցաղային տարածքներից առաջացող չտեսակավորված թափոնները հիմնականում ոչ վտանգավոր են և ներառում են սննդային մնացորդներ, թուղթ, պլաստմասսա, ապակի և փոքր ծավալի մետաղական թափոններ: Դրանք հավաքվում և հեռացվում են սահմանված կարգով՝ լիցենզավորված կազմակերպությունների միջոցով:

Շինարարական և շահագործման փուլում առաջացող նյութերի բնապահպանական տեղեկատվություն: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական թափոնները հիմնականում չեն պարունակում վտանգավոր բաղադրիչներ և ներառում են բետոն, աղյուս, քար, մետաղ, փայտ և հողային խառնուրդներ: Փորման (հողային) աշխատանքների ընթացքում առաջացած հողը նույնպես չի աղտոտվում վտանգավոր նյութերով, և այն կարող է օգտագործվել տեղում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եռակցման աշխատանքներից առաջացող եռակցման խարամը, ինչպես նաև յուղոտված լաթերը կուտակվում են առանձին, նշագրված տարաներում և փոխանցվում լիցենզավորված կազմակերպությունների՝ վերամշակման կամ ոչ վնասակար վերացման համար:

Պետքարտուղարության փուլում՝ շահագործման ընթացքում, եթե նախատեսվում է տրանսֆորմատորային ենթակայան, առանձնացվում և վերահսկվում են հատկությունը կորցրած տրանսֆորմատորային յուղերը՝ ըստ գործող նորմատիվների և անվտանգության պահանջների:

Բոլոր վերոհիշյալ նյութերի կառավարման ընթացքում կիրառվում են բնապահպանական **մեղմացնող միջոցառումներ**, որոնք ներառում են՝

- առանձին հավաքում և պիտակավորում,
- վտանգավոր նյութերի տարածման բացառման միջոցառումներ,
- լիցենզավորված կազմակերպությունների միջոցով վերամշակում կամ անվտանգ ոչնչացում,
- տարածքի մաքրություն և վերահսկվող պահպանում մինչև վերամշակում/փոխհատուցում:

Շինադրի, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Երևանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

9. ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Օդի որակի վրա ազդեցություն

- Փոշու բարձրացում շինարարական տարածքից:
- Թափոնների տեղափոխման և տեխնիկայի շահագործման հետևանքով արտանետվող գազեր (CO_2 , NO_x , SO_x):
- Թեթև ու թոչող մասնիկների տարածում տարածքի սահմաններից դուրս:

2. Շրջակա միջավայրի աղմուկային աղտոտում

- Քանդման տեխնիկայի (էքսկավատորներ, բուլդոզերներ, բեռնատարներ) առաջացրած բարձր աղմուկ:
- Մուրճերի, բետոնի ճեղքման սարքերի և այլ մեխանիկական սարքերի աշխատանք:

3. Հողային ռեսուրսի վրա ազդեցություն

- Հողի վերին բերրի շերտի վնասում կամ հեռացում:
- Հողի աղտոտում վառելիքի, լուրիկանտների, քսայուղերի հնարավոր արտահոսքերից:
- Հողի մակերեսի խախտում ծանր տեխնիկայի շարժից:

4. Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն

- Անձրևաջրերի միջոցով փոշու կամ թափոնային մասնիկների լվացում դեպի կոյուղի կամ բնական ջրուղիներ:
- Վառելիքի կամ քսայուղերի արտահոսքի դեպքում մակերևութային կամ ստորերկրյա ջրերի աղտոտման վտանգ:

5. Կենսաբազմազանության վրա ազդեցություն

- Տարածքի բուսածածկի մասամբ վնասում:
- Թռչունների և փոքր կենդանիների բնական միջավայրի խանգարում:
- Աղմուկի պատճառով կենդանական աշխարհի խաթարում:

6. Տեսաշրկայի և բնակելի միջավայրի վրա ազդեցություն

- Քանդման աշխատաքները կարող են առաջացնել ժամանակավոր էսթետիկ խաթարում:
- Աղմուկի և փոշու պատճառով ազդել մոտակա բնակիչների կյանքի որակի վրա:

7. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

- Ժամանակավոր անհարմարություններ տեղական տրանսպորտի, բնակիչների և բիզնեսի համար:
- Աշխատավայրերի ժամանակավոր ստեղծում:

9. 1 ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՌՄԱՆ, ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

1. Օդի որակի պաշտպանություն

- Քանդման ընթացքում տարածքի պարբերական ջրում՝ փոշու նվազեցման համար:
- Փոշոտող նյութերի փակ բարձումներ:
- Նյութերի տեղափոխման ընթացքում բեռնատարների ծածկում:
- Շարժիչների տեխնիկական պարբերական սպասարկում՝ արտանետումների նվազեցման համար:
- Քամու ուժգնության բարձր լինելու դեպքում աշխատանքների ժամանակավոր դադարեցում:

2. Աղմուկի նվազեցում

- Աշխատանքները կատարել միայն սահմանված աշխատանքային ժամերին:
- Օգտագործել հնարավորինս ցածր աղմուկով աշխատող տեխնիկա:
- Պահանջի դեպքում օգտագործել աղմուկամեկուսիչ վահանակներ:
- Սարքավորումների պարբերական տեխնիկական սպասարկում՝ աղմուկի նվազեցման նպատակով

3. Հողի պաշտպանություն

- Բերրի շերտի առանձնացում և պահպանություն՝ հետագայում տարածքը բարեկարգելու համար:
- Տեխնիկայի համար նախատեսված երթուղիների սահմանում՝ հողի համատարած խախտումները կանխելու նպատակով:
- Վառելիքի և քայլուղների պահպանման և լցման անվտանգության կանոնների պահպանում:
- Արտահոսքերի կանխարգելման համար նախապես տեղադրել կլանող նյութեր:

4. Զրային ռեսուրսների պաշտպանություն

- Շինհրապարակում կազմակերպել կոյուղու և անձրևաջրերի կառավարման համակարգ:
